սին, պատմական այս ծանր ժամանակահատվածում, հույսի և քաջալերանքի աղբյուր էր: Եվրոպական Եկեղեցիների Խորհուրդը դեռ երկար կհիշի Նորին Սրբության Էկումենիկ հանձնառությունը և հոգևոր ներդրումը խաղաղության, արդարության և հաշտության գործում:

Կաթողիկոսի աջակցությունը հրադադարի, ադրբեջանական կոնֆլիկտի խաղաղ կարգավորման և գերիների փոխանակման գործում, Հայաստանին խաղաղություն և ապոփանք բերող նրա ջանքերը այն բազմաթիվ օրինակներից են, որոնց վկաներն ենք մենք՝ նրա այսօրվա գործակիցներս:

Եվրոպական Եկեղեցիների Խորհուրդը իր ցավակցությունն է հայտնում հայ ժողովրդին իր հոգևոր մեծ առաջնորդի կորստյան համար և աղոթում Տիրոջը, որ սեր և գթություն առաքի Ձեզ այս ծանր պահին:

Եվրոպական Եկեղեցիների Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի և նրա նախագահ քահանա Ջոն Առնոլդի անունից հայտնում ենք Ձեզ մեր վշտակցությունը և միջնորդական աղոթքները:

ԺԱՆ ՖԻՇԵՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ժնև, 19 օգոստոս 1994 թ.

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՎԱՍԵՄԱՇՈՒՔ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ,
ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Երևան

Վսեմաշուք տիար Նախագահ,

Ընդունեցեք իմ, Հայ Կաթողիկե Պատրիարքությանս և իր թեմերուն ցավակցության խոր արտահայտությունները Վազգեն Առաջին Վեհափառ Հայրապետին վախճանման առթիվ: Անձերը կանցնին, հաստատությունները կմընան:

Թող Աստված հավիտյան պահե Հայոց Եկեղեցին և անոր մեծագույն թիկունքը հանդիսացող Հայոց նորանկախ Հանրապետությունը:

Այս ցավագին պարագային, կնորոգենք մեր Հայ Կաթողիկե նվիրապետության անսակարկ կառչածությունը հայրենի պետության և անոր արժանավոր պետին: Աստված անվտանգ պահե զինք ու իր կառավարած երկիրը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԸ
ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Միսիթարյան միաբանության աբբահայրը և բոլոր միաբանները խոր հուզումով լուրը առին Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան գույժին և մասնակից են հասարակաց խոր կսկիծին:

Թող բարին Աստված զինքը սիրով ընդունի իր լուսեղեն և հավիտենական հարկին մեջ, ինքը, որ քառասուն երկար տարիներ իր ժպիտով և հայրապետական մեծ հոգիով տարավ ցավը ամբողջ ազգին՝ զորավիգ կանգնելով անոր տառապանքի օրերուն:

Մեր ցավակցական զգացումներուն կմիացնենք ջերմ աղոթքներ, որ բարեգութն Աստված իր Ս. Հոգիով միսիթարե համայն հայությունը և անսասան պահե Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո Մայր Աթոռը:

Հ. ԳԵՈՐԳ ՎՐԴ. ՊԱԼՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱՀԱՅՐ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Ս. Ղազար, 25 օգոստոս 1994 թ.

* * *

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԳԱԿԻՐ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան գույժը համազգային սուգի մատնեց ամբողջ հայրենիքն ու ափյոտքը:

Վիեննայի Միսիթարյան միաբանությանս իբրև Ընդհանուր Աբբահայր՝ իմ և բոլոր միաբանակից Հայրերու անունով, մեր խոր ու անկեղծ ցավակցությունը կհայտնենք Ս. Էջմիածնի միաբանության, հայրենի կառավարության ու ժողովուրդին և համայն մեր ազգին, այս դառն, անվերադարձ կորուստին համար:

Կաղոթենք, որ Աստված լույսերու մեջ հանգչեցնե վաստակավոր մեծ Հայրապետի հոգին, Ս. Էջմիածնի միաբաններուն և մեր բոլորին սրտերը լեցնե իր երկնային միսիթարությամբ և ընտրե արժանավոր հաջորդը՝ իբր «այր ըստ սրտին Աստուծոյ» Ս. Էջմիածնի Մայր Աթոռին:

Հ. ՊՈՂՈՍ ՎՐԴ. ԳՈՇԱՆՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱՀԱՅՐ
ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԻԱԲԱՆԱԿԻՑ ՀԱՅՐԵՐ

Վիեննա, 19 օգոստոս 1994 թ.

* *

ԱՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

Էջմիածին

Ամենախոր վիշտով իմացանք Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսի վախճանման լուրը:

Հանուն Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի մեր Հայ Կաթողիկե Համայնքներուն կու գանք ներկայացնել, մեր անձնական երկյուղած զգացումներով խառն, սրտագին ցավակցություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո Ս. Էջմիածնի հոգևոր իշխանությանց:

Երկնքի արքայության լույսերուն մեջ հավերժ պայծառանա նորոգ հանգուցյալ երջանկահիշատակ մեծագործ և շինարար Հայրապետի հոգին, ի շարս բազում լուսերամ Կաթողիկոսներու:

Ցավոք անկարող անձամբ մասնակցելու թաղման արարողությանց, եռանձնյա պատգամավորություն մը պիտի գա փոխարինել մեզ:

Մեր հրահանգով, հետ Ս. Պատարագի, հոգեհանգստյան պաշտոններ պիտի կատարվին մեր Հայ Կաթողիկե բոլոր Եկեղեցիներուն մեջ, ի Հայաստան և ի Վրաստան, ի հիշատակ հանգուցյալ Հայրապետին:

Խնկանվեր աղոթքներով, եղբայրորեն վշտակից՝

ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԲԱՍՏԻՈ ՀԱՅՈՑ ԵՎ
ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՑ, ԶԱՆԱԶԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ ԵՎ ԱՆՀԱՏ ԱՆՁԱՆՑԻՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Էջմիածին, Հայաստանի Հանրապետություն

Ստեղծագործության Ակադեմիան ամբողջ հայ ժողովրդի հետ բաժանում է Նորին Սրբություն անմոռանալի Վազգեն Առաջինի մահվան ծանր վիշտը: Մեր հիշողության մեջ երախտագիտությամբ կպահենք այն անգնահատելի ավանդը, որ ներդրել է Նորին Սրբությունը մեր համատեղ գործունեության մեջ՝ իբրև մեր Ակադեմիայի իսկական անդամ: Մենք կաշխատենք ավելացնել այդ ավանդը՝ ի բարօրություն և ի բարգավաճումն աշխարհի ժողովուրդների:

Գ. Պ. ԳԼԱԴԻՇԵՎ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ

Մոսկվա, 19 օգոստոս 1994 թ.

Վեհափառի դին Վեհարանում

Վեհափառի դին՝ զետեղված Մայր տաճարում

Սգո թափորը հանդիսաբայլ դուրս է գալիս Առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցուց

Հանգստյան կարգ

Սգո թափորը մուտք է գործում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հանգստյան կարգ